

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ PART ONE

## 1. ՀԱՆԴԻՊՈՒՄ MEETING PEOPLE

Բարև ձեզ:	How do you do!	հաու դու յու: դու
Ողջույն	Hello!	հալոու
Բարի առավոտ:	Good morning!	գուդ մո:նին
Բարի օր:	Good afternoon!	գուդ ւ:ֆթընու:ն
Բարի երեկո:	Good evening!	գուդիվնին
Բարի գալուստ:	Welcome!	ուելքըմ
Ինչպես եք:	How are you?	հաու ա: յու:
Լավ եմ, շնորհակալություն: Իսկ դուք ինչպես եք:	Very well, thank you. How are you?	վերի ուել թանք յու: հաու ա: յու:
Շատ լավ, շնորհակալություն: Իսկ քեզ մոտ ինչ կա:	Fine, thanks. And you?	ֆայն թանքս, ընդ յու:
Ամեն ինչ կարգին է:	Everything's fine, thanks	Էվրիթինգգ ֆայն, թանքս
Ողջույն, ինչ հաճելի անակնկալ: Ինչպես եք:	Well, hello... This is a pleasant surprise. How are you?	ուել, հալոու, դիս իգ ը փլեզնթ սը:ւիրայս. հաու ա: յու:
Ի՛նչ հաջողություն: Հազար տարի է ձեզ չեմ տեսել:	Oh, what luck! I haven't seen you for ages.	օու ուոթ լաք. այ հավնթ սի:ն յու: ֆոր էշիզ
Ողջույն, ով կպատկերացներ հանդիպել ձեզ այստեղ: Ինչպես են գործերդ:	Hi..., Fancy meetieg you here. How are you doing?	հայ... ֆանսի միսթին յու: հիը հաու ա: յու: դուին

Մի՞ թե այդ դու ես:	Well, if it isn't...	ուել իՖ իթ իզընթ...
Ինչ նորություն կա: (Ինչ լուր:)	What's the news?	ուոթս դը նյու:զ
Ոչ մի նորություն:	No news	նոու նյու:զ
Լուր չլինելն ինքնին լավ լուր է:	No news is good news.	նոու նյու:զ իզ գուդ նյու:զ
Բարի լույս: Ի՞նչ հաճելի է, որ եկաք:	Good morning. I'm so pleased you could come.	գուդ մո:նին. այմ սոու փլի:զդ յու: քուդ քամ
Բարի օր: Լավ է, որ եկաք:	Good afternoon. It's so nice of you to come.	գուդ ա:ֆթընու:ն իթս սոու նայս ըվ յու: թը քամ
Բարի երեկո: Անչափ ուրախ եմ քեզ տեսնելու համար:	Good evening. So glad to meet you.	գուդ իվնին սոու գլադ թը միթ յու:
Հաճելի է ձեզ հանդիպել:	Nice to see you!	նայս թը սի: յու:
Շնորհակալություն հրավերքի համար:	Thanks for asking me (us).	թանքս ֆոր ա:սքին մի: (աս)
Շատ զգացված եմ, որ հրավիրեցիք ինձ:	It was very kind of you to*invite me.	իթ ոուզ վերի քայնդ ըվ յու: թու ինվայթ մի:
Ո՞ր էիք անհայտացել:	Where on earth have you been?	ուերր օն ը:թ հավ յու: բի:ն
Ինչ լավ է, որ հանդիպեցի ձեզ:	What luck running into you.	ուոթ լաք րանին ինթու յու:
Ինձ հենց դուք էիք հարկավոր:	You're the very man I wanted.	յուըր դը վերի ման այ ուոնթիդ